

Հաշվետվություն

2024 թվականի նոյեմբերի 25-29-ը Հնդկաստանի Հանրապետություն, (Նյու Դելի)
կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Վահագն Մուրադյան, Կադաստրի կոմիտեի գեոդեզիայի և
հողաշինարարության վարչության պետ

Կարեն Գրիգորյան, Կադաստրի կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների
կենտրոնի պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Հնդկաստանի Հանրապետություն, Նյու Դելի, նոյեմբերի 25-ից 29-ը

3. Հրավիրող կողմը.

Ասիայի և Խաղաղ օվկիանոսի երկրների ՄԱԿ-ի գլոբալ աշխարհատարածական
տեղեկատվության կառավարման կոմիտե (UN-GGIM-AP)

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդիրների լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Ասիայի և Խաղաղ օվկիանոսի երկրների ՄԱԿ-ի գլոբալ
աշխարհատարածական տեղեկատվության կառավարման 13-րդ լիագումար
նիստին:

5. Քննարկված թեմաները.

Նիստի ընթացքում ներկայացվեց Չինաստանի, Ֆիջիի, Հնդկաստանի, Նեպալի,
Ռուսաստանի, Սինգապուրի, Տիմոր Լեստեի փորձը հողերի կառավարման և
կադաստրային համակարգերի զարգացման ուղղությամբ, ինչպես նաև
կատարված աշխատանքները: Ներկայացուցիչները խոսեցին հողերի
կառավարմանը վերաբերող ժամանակակից մոտեցումների, տեխնոլոգիական
առաջխաղացումների և բարեփոխումների մասին: Ինչպես նաև ներկայացրին
հողերի կառավարման գործառույթների արդիականացման, տվյալների
կառավարման և հասանելիության ապահովման, քաղաքացիներին
ծառայությունների մատուցման բարելավման ուղղությամբ կատարված
աշխատանքների մասին: Անդրադարձ եղավ մարտահրավերներին և գրանցված

հաջողություններին, ներկայացվեց առաջարկություններ՝ կապված հողերի կառավարման համակարգերի արդիականացման հետ:

Ակադեմիական, պետական մարմինների և մասնավոր սեկտորի փորձագետները ինտերակտիվ եղանակով նիստի մասնակիցների հետ համատեղ կատարեցին հարցումներ՝ կապված բազմաբնույթ մարտահրավերների և հնարավորությունների հետ հողերի կառավարման ոլորտում: Ներկայացվեց հետևյալ հարցադրումները՝

- Մեկ բառով գրեք թե ո՞րն է հողերի կառավարման համար ամենամեծ խոչընդոտը:
- Մեկ բառով գրեք թե ո՞րն է հողերի կառավարման կարողությունների և կրթության համար ամենամեծ խոչընդոտը:
- Ո՞րոնք են հողերի կառավարման ոլորտի հմտությունների բացերը, քանի որ արագ զարգանում են տեխնոլոգիաները: Ինչպե՞ս դա կարելի է լուծել:
- Ինչպիսի՞ պոտենցիալ օգուտներ կարող են առաջանալ ակադեմիական հաստատությունների, պետական գերատեսչությունների և մասնավոր հատվածի համագործակցության արդյունքում:
- Ինչպիսի՞ մոբայլ տեխնոլոգիաների օգտագործման հնարավորություններ են առկա հողերի կառավարման գործառնություններում հասարակության ներգրավվածության բարձրացումը ապահովելու համար:

Նիստի ընթացքում ներկայացվեց Ավստրալիայի, Հնդկաստանի, Ինդոնեզիայի, Իրանի փորձը, որոնք կապված են երկրատարածական և վիճակագրական տվյալների ինտեգրալ տեխնոլոգիաների ներդրման հետ: Կարևորվեցին գործադրած ջանքերը՝ կապված ազգային վիճակագրական գործակալության և տարածական տվյալներ տնօրինող գերատեսչությունների միջև համագործակցության ապահովումը Գլոբալ վիճակագրական երկրատարածական կառուցվածքի (GSGF) ընդունման ուղղությամբ:

Կորեայի, Հնդկաստանի և Միացյալ Ազգերի վիճակագրական կոմիտեի փորձագետները կիսվեցին իրենց պատկերացումներով երկրատարածական և վիճակագրական տվյալների ինտեգրման հետ, մասնավորապես՝

- Երկրատարածական տվյալների համակարգի հարթակների և վիճակագրական համակարգերի կիրառությունը ինտեգրման համար,
- Մեծ ծավալի տվյալների, արհեստական բանականության և հեռավար գոնդավորման տվյալների ինտեգրամն դերը,
- Հմտությունների զարգացման պահանջները և տարածքային համագործակցության հնարավորությունները,
- Տվյալների որակի, ստանդարտացման և փոխանակման խնդիրների լուծումը:

Ընդգծվեցին հնարավոր մարտահրավերները, որոնք կապված են Երկրատարածական և վիճակագրական տվյալների կառուցվածքի արդյունավետ ներդրման հետ:

Նիստին ներկայացվեց Հնդկաստանի, Տոնգայի, Նոր Զելանդիայի, Ճապոնիայի մարտահրավերները մշտական գործող ռեֆերենց կայանների գործելու և ապահովելու վերաբերյալ: Ներկայացվեցին կայանների դասավորությունները (հեռավորությունը, տեղադիրքը որոշելու մոտեցումները բարձր ճշտություն ապահովելու համար), քանակը և առցանց մատուցվող ծառայությունները:

Ներկայացվեց Ինտեգրված երկրատարածական տեղեկատվության շրջանակը (IGIF) և դրա առավելությունները կառավարության, կազմակերպությունների և շահառուների կողմից որոշումներ կայացնելու ընթացքում կիրառելու համար:

Կազմակերպվեց ինտերակտիվ քննարկում հետևյալ հարցերի շուրջ՝

- Ի՞նչ նշանակություն ունի ձեզ համար UN-IGIF-ը,
- UN-IGIF ուղղություններից որո՞նք են ամենակարևորը,
- Մասշտաբավորել UN-GGIM-ի չորս թեմատիկ ցանցից անհրաժեշտ աջակցությունը՝ UN-IGIF ինը ուղղություններից յուրաքանչյուրի համար,
- Ինչպե՞ս կարող ենք չափել UN-IGIF-ի ներդրման ազդեցությունը:

Առանձին կազմակերպվեցին աշխատանքային խմբերի քննարկումներ՝

Խումբ 1 - Գեոդեզիական ռեֆերենց շրջանակ,

Խումբ 2 - Կադաստր և հողերի կառավարում (մասնակցեց Կարեն Գրիգորյանը),

Խումբ 3 - Երկրատարածական և վիճակագրական տվյալների ինտեգրում,

Խումբ 4 - Ինտեգրված երկրատարածական տեղեկատվության շրջանակ (մասնակցեց Վահագն Մուրադյանը):

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված և քննարկված հարցերը.

Բարձրացրել ենք սպասարկման գրասենյակների կազմակերպման, էլեկտրոնային ծառայությունների մատուցման, հասցեների ռեեստրի կազմակերպման, տարածական տվյալների ենթակառուցվածքի, ոլորտային տարածական տվյալների ինտեգրման և տեղեկատվական համակարգերի զարգացման հետ կապված հարցեր: Այդ հարցերի շուրջ նաև առանձին քննարկումներ ունեցանք տարբեր երկրների մասնակիցների հետ:

Survey of India-ի, Հնդկաստանի կառավարության գիտության և տեխնոլոգիաների նախարարության և Հնդկաստանի գիտությունների ինստիտուտի ներկայացուցիչների հետ պայմանավորվեցինք շարունակել համագործակցությունը գեոդեզիայի և քարտեզագրության ոլորտին, ազգային

գեոպորտալին և ծառայությունների մատուցմանը առնչվող փորձի փոխանակման ուղղությամբ:

Աշխատանքային խմբերի քննարկումների ժամանակ ներկայացրել ենք Կադաստրի կոմիտեի գործառույթները, ՀՀ ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքը, ազգային գեոպորտալը և զարգացման ուղղությամբ կատարվող աշխատանքները, ինչպես նաև պետական գրացնման համար կիրառվող էլեկտրոնային համակարգը: Ներկայացրել ենք քարտեզագրական տվյալները երկրատեղեկատվական համակարգերի փոխգործելիության համար նախատեսված ձևաչափի տեղափոխման մեթոդները և նոր քարտեզագրական համակարգ մուտքագրման աշխատանքները: Պատմել ենք Ազգային գեոպորտալի քարտեզագրական համակարգում մուտքագրված տվյալների թարմացման մեթոդների մասին և քննարկման առարկա ենք դարձրել այդ մեթոդների կիրառության հնարավորությունները նաև այլ տարածական տվյալների համար: Բարձրացրել ենք հարցեր, որոնք կապված են տարածական տվյալների օպտիմալացման հետ, ինչպես նաև կրկնվող տվյալների բացառումը այլ գերատեսչությունների և կազմակերպությունների տարածական տվյալների համակցման ժամանակ: Ներկայացվել է նաև տարածական տվյալների ոլորտի զարգացման նոր ուղղությունների հիմնական դրույթները, որոնց հիմքում դրվելու է նաև UN-IGIF-ի գործողությունների ծրագրի սկզբունքները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Միջոցառման վերջում ընդունվեց հռչակագիր, որով հավաքի մասնակիցները աջակցում են հաջորդ տարի Կորեայի Հանրապետությունում 14-րդ լիազումար նիստի անցկացմանը, ինչպես նաև երկրատարածական տվյալների զարգացման տեսլականը, ըստ որի պետք է խթանել մասնավոր ոլորտի հետ համագործակցությունը, ներգրավել մասնավոր ոլորտի ներկայացուցիչներին, զարգացնել կապը գիտական ոլորտի հետ և ստեղծել Գիտական ցանց UN-GGIM-ի շրջանակներում, որտեղ ներգրավված են լինելու ոլորտի գիտնականները:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Շարունակել ինտենսիվ աշխատանքային քննարկումները գործընկերների հետ նաև առցանց ձևաչափով:

Առաջարկում ենք Հայաստանի Հանրապետությունում բարձրացնել Տարածական տվյալների ենթակառուցվածքի վերաբերյալ իրազեկվածության մակարդակը, կարևորել դրա դերը հասարակության և գործարարության համար,

ուժեղացնել ակադեմիական հանրության հետ կապը: Շարունակել ավելի ինտենսիվ Կադաստրի կոմիտեի՝ այդ ոլորտում ունեցած փորձի փոխանցումը նաև այլ գերատեսչություններին և կազմակերպություններին: Կադաստրի կոմիտեի կողմից ներդրված տարածական տվյալների ենթակառուցվածքի միջոցով հասարակության համար ապահովել հասանելիություն նաև այլ գերատեսչություններում առկա տարածական տվյալների համար՝ իրենց համաձայնությամբ:

Առաջարկել Վիճակագրական կոմիտեին կիրառել Ազգային գեոպորտալի քարտեզագրական համակարգի հնարավորությունները (վեբ սերվիսների միջոցով) իրենց վերապահված գործառույթների իրականացման ժամանակ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Վահագն Մուրադյան



Կարեն Գրիգորյան



03.12.2024 թ.